Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

Elísabet Kristín Jökulsdóttir

Ástin ein taugahrúga:
Enginn dans við Ufsaklett

Elisabet Kristín Jokulsdottir

LOVE, A NERVOUS WRECK.
NO DANCING AT COALFISHROCK

Translated by Christina Kocharyan
from English into Armenian

Stepanakert, 2021

Էլիզաբեթ Քրիստին ՅՈԿՈՒԼՍԴՈՏԻՐ

ՍԵՐ, ՆՅԱՐԴԵՐԻ ՔԱՅՔԱՅՈՒՄ.
ՈՉ ՄԻ ՊԱՐ ՁՈՒԿ-ՔԱՐԻ ՎՐԱ

Թարգմանություններն անգլերեն տարբերակից՝
Քրիստինա ՔՈՉԱՐՅԱՆԻ

Ստեփանակերտ, 2021

ՀՏԴ 821.113.3-1 Յոկուլսդոտիր
ԳՄԴ 84(4Իս)-5
Յ 579 «Գեղարm» հանդեսի մատենաշար

Յոկուլսդոտիր Էլիզաբեթ Քրիստին
Գ 878 ՍԵՐ, ՆՅԱՐԴԵՐԻ ՔԱՅՔԱՅՈՒՄ. ՈՉ ՄԻ ՊԱՐ ՉՈՒԿ-ՔԱՐԻ ՎՐԱ: Բանաստեղծություններ: (թարգմ. անգլերենից՝ Ք. Քոչարյանի), Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հր., 2021, 92 էջ:

Էլիզաբեթ Յոկուլսդոտիրը ժամանակակից իսլանդական բանարվեստի ճանաչված դեմքերից է, նրա անունը առավելս կապվում է «կանացի գրականության» հետ: Յոկուլսդոտիրի պոեզիան լի է կնոջ հոգին նրբորեն գաղտնազերծող բազում ուշագրավ բացահայտումներով: Նա շատ լույս, հավատ ու հավատարմություն է սփռում հատկապես սիրո թեմայով գրված բանաստեղծություններում, որոնք աչքի են ընկնում հուզիչ անմիջականությամբ:

This book has been translated with a financial support from:

ICELANDIC LITERATURE CENTER
MIÐSTÖÐ ÍSLENSKRA BÓKMENNTA

Գրքի թարգմանությունը ֆինանսավորել է Իսլանդիայի գրական կենտրոնը

ISBN 978-9939-1-1317-3

ՀՏԴ 821.113.3-1 Յոկուլսդոտիր
ԳՄԴ 84(4Իս)-5

© Elisabet Kristín Jokulsdottir, 2021
© «Ոգի-Նաիրի»/թարգմանության համար/, 2021

Մաս I

...սիրալիրություն

ՄՈՌԱՑՎԱԾ ԴՈՒՌ

Պանդխտության մեջ մի դուռ կա
որը ես հրում եմ դեպի ծովը
և շրջվում նրա կողմը
ավելի ուշ դուռը մոտենում է
որ ինձ վերածնի:

Սերն ինչ նախկինում խենթության էր հասցնում
այժմ կամաց-կամաց ես հասկանում եմ նրա էությունը.
մի՞թե այդ փրկագնող ուժը դեղ է
խենթությունից ազատվելու:

ԻՍԿԱԿԱՆ ԿԻՆԸ

Երբ նա ասաց, որ ես իսկական կին եմ,
հիպնոսացա տեղում.
վերջապես մեկը տեսավ ինձ այնպես, ինչպիսին կամ,
վերջապես մեկը հասկացավ, որ այն կանանցից չեմ,
ովքեր հագնում են բարձրակրունկներ,
սպորտային նեղ հագուստ,
հարդարվում են դիմափոշով ու ստվերաներկով,
քայլում են ուղղած
մազերով և սիլիկոնով լցոնված-փքված կրծքերով,
ժպիտը դեմքներից անպակաս. ես երբեք նրանց
չեմ նմանվել, մինչդեռ
կարծում էի, որ իսկական կանայք հենց նրանք են,
իսկ ես խաղում եմ
հորինված մի խաղ, ուր տղան կամ խեղկատակը
չեն կարող մերվել
ձևանալով, ուստի սկսեցի հանդիպել նրա հետ
և ասացի, որ նա
գեղեցիկ է՝ հուսալով նրան վերափոխել այնպես,
որ շարունակի կարծել՝ ես, գրողը տանի,
իսկական կին եմ, բայց մինչ այդ նա ինձ նվիրել էր
բարձրակրունկներ, դիմափոշի, շրթներկ,
ստվերաներկ, հագցրել էր ինձ
նեյլոնե շորեր ու կորսետներ. մինչ այդ ես նույնիսկ
ժամանակ չեմ ունեցել
խորհելու այդ մասին:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ ՍԻՐՈ ԿԱՄ ՄՈՌԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ուզում եմ մոռանալ ինքս ինձ
մոռանալ իմ անունը
ով եմ ես
ում ես գիտեմ
ինչ արել և մտածել եմ
մոռանալ ինչ վերապրել եմ
ինչ քայլեր եմ ձեռնարկել, բարձրացել ժայռերը
մոռանալ որ պարել եմ
նույնիսկ երբ ոչ ոք չէր նայում
մոռանալ որ ունեմ սեղան աթոռներ
պատ դռներ երկինք
մոռանալ գագաթնաժողովները փրփրաբաշ ալիքը
ավազը
երազները սեղանի համեմունքները
հանձնարարություններ կատարելու վազվզուքը
հեռախոսազանգերն ու շաքարամանները
մոռանալ այն ամենն ինչ հիշում եմ
մոռանալ որ վաղը պիտի բժշկի գնամ
և չորեքշաբթի օրը պետք է հանդիպենք
մոռանալ մոռանալ մոռանալ
մոռանալ ամեն ինչ քեզնից բացի

ԱՌԱՋԻՆ ՕՐԸ

Նա ինձ զանգեց ու ասաց
որ փոխեմ կեցվածքս
ես նման բան չէի լսել
մանկուց ի վեր
բայց երբ մի օր նրան
հանդիպեցի խորովածանոցում
նրա վերաբերմունքն ինձ
պարզապես զվարճալի թվաց
ես շտապեցի հեռանալ
իսկ նա խոսում էր ու խոսում
ես հատուկենտ բառեր էի նետում.
հարցրեցի՝ ե՞րբ է նա բաժանվել
իր ութ կանանցից
ավելի ճիշտ՝ չորս
Օ, երբ նրա լեզուն սկսեց բարբաջել
չէի հասկանում՝ ինչու չէի հեռանում
գուցե չգիտեի՝
որտեղ է ելքը:

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ

Երկրորդ օրը
իմ ամբողջ
կյանքը
թվաց
անիմաստ.

Կախարդությո՞ւն էր:

Ասես մի կոկոն էր
իմ կյանքից
պոկվել...

ԵՐՐՈՐԴ ՕՐԸ

Նա հայտնվեց իր երեք նկարներով
հոգնածությունը օվկիանոսից փչած մշուշի պես
սողոսկեց մարմինս
ես ցանկություն չունեի վերլուծելու մի այլ
հոգեբանություն:

Եվ որտե՞ղ էր իմ այդ նկարը:

Մի՞թե ձեռքերովս
փակել էի աչքերս:

ՉՈՐՐՈՐԴ ՕՐԸ

Նա հայտնվեց աստիճաններին
պայուսակի մեջ անկողնային պարագաներով
դե ինչ ասեմ
ներսում մի ձայն
հառաչեց անհանգիստ
իսկ մյուսը՝ երբեք չէր ճաշակել
այդպիսի սեր:

ՁՄԵՌԱՅԻՆ ՍԻՐԱՎԵՊ

Ձյուն է գալիս, ձյունը պարելով իջնում է ցած
մենք մոմ ենք վառում թղթախաղ խաղում
գիշերն անկողնում կարդում իրար համար
ձյունը պարում է ու պտտվում
մենք իրար ձեռք ենք բռնում հանց երեխաներ
իրար ձեռք բռնած ընկղմվում հիշողության ավազանը
նույնիսկ քնում ենք իրար ձեռք բռնած
նա սուրճ է եփում
մաքրում աստիճանները
ամենուր գնում ենք միասին՝
խանութ, բժշկի, ավտոբուսով ինչ-որ տեղ
նա ինձ հրավիրում է ավտոբուսի կանգառ
որտեղ զրուցում է ասես Աստծո հետ
իսկ ձյունը թափվում է փաթիլ-փաթիլ
նա իմ ննջասենյակը կոչում է
սիրո ձեղնահարկ:

ՊԱՐԸ

Մենք գնում ենք պարի
ես մտածում էի
իմ մտադրությունների մասին
երբ հիշեցի երկբևեռ
խռովություններս՝
մեկը մյուսին չեն զիջում
փոխարենը հանկարծ հանդիպում է իմ
դպրոցական ընկերուհին ու ասում՝ հուսով է
իմ տղամարդը ինձ չի ծեծում
ինչպես մյուս բոլոր կանայք
ես ավելի քան համոզվում եմ որ
իրականությունը խեղաթյուրում է
երազանքները
նա չի պատմում ճշմարտությունը
բայց նրա դեմքը մտքիցս չի հեռանում:
Երբ առաջին անգամ ես և նա գնացել էինք
լողավազան և ես թագուհու պես
դուրս էի եկել հանդերձարանից
նա բռնել է ձեռքս ու դրել իր ձեռքին
կարծես անօգնական երեխա լինեի
ահա ինչ կարող են անել այդ չարագործները
նրանք կանանց կարող են վերածել երեխաների:

ՊԼԱՍՏԻԿ ՊԱՅՈՒՍԱԿ ԿՐՈՂԸ

Հետո գալիս է մի այլ կին
ասելով՝ դա այն տղամարդն է ով շրջում է ամենուր
ես նման անհեթեթություն չէի լսել
կինը պնդում է որ հանդիպել է նրան
հանրախանութում եւ նա ասել է նրան՝
հինգ կին հարձակվել էին նրա վրա
և հարցնում էին՝ երբ պետք է միասին քնեին
ես սա ջնջեցի իմ գիտակցությունից
արդեն մեկ այլ տեսարան էր պատկերված
սա կլինի իմ վերջին տղամարդը
բայց ես ամեն դեպքում հարցրեցի նրան՝
ինչպես նա կարձագանքեր
եթե ինչ-որ մեկն այդպես խոսեր իմ մասին
նա քարացավ լեզուն կապ ընկավ
բայց հետո նրա ստորին շրթունքը սկսեց դողալ:
Նա ինձ հիշեցնում է ձնակույտի մեջ քայլել
սովորող երեխայի այլ ոչ թե հանրախանութի
ամենահայտնի կնամոլի:

ԱԽՏԱՆԻՇ

Նա ինձ ասում է որ հանդերձանքն իմ վատն է
նա ինձ կտա գեղեցիկ հագուստ
և ամեն օր կզանգի
ապա մեկ շաբաթով նույնիսկ կարող եմ մեկնել
կարծես նա հենց նոր է ավարտել
պարսավագրքի ընթերցումը
և անգիր գիտի բոլոր ախտորոշումները
հետո նա մեկնաբանում է խոսքս
ասելով որ ես պետք է այլևս չօգտագործեմ
հըմ բառը: Ես նրան բացատրում եմ՝ *հըմ*-ը
այն բառերից մեկն է որից ծագել է
հյութեղ լեզուն:
Կարծում եմ նա մի տեսակ ցնորված է
որովհետև ծանոթ եմ ախտանշաններին.
այդ մարդը պետք է փոխվի
իմ ձեռքով
և ազատվի ախտանշաններից
բայց մոռացել եմ
որ իմ ձեռքերով փակել եմ
աչքերս:
Հետո նա գնում է
վերականգնողական կենտրոն
և դառնում քաղաքի հերոս
ես ամբողջովին ստվերի տակ եմ հայտնվում:

ԻՄ ԸՆԿԵՐԸ

Նա կարմրաքուշ է, սրաչք
արծվի պես՝
հայացքը հորիզոնում
իսկ հիմա նայում է ինձ
չի վստահում՝
հետևում է ինձ քնում է շատ զգույշ
կարծես՝ պատրաստվում եմ դանակահարել
նրան թիկունքից
ահա այն նուրբ զրահը
որը նա ստեղծել է
որ ես փափագեմ:

ԱՊՐԵԼԱԿԱՐԳ

Երբ ես զանգում եմ նրան և ասում
որ ուզում եմ ինքնասպան լինել
քանզի կորցրել եմ գլուխս
որ հոռետեսությունից, կասկածներից,
բռնությունից զատ
ոչինչ չեմ տեսնում և միակ միջոցը հեռանալն է
նա ինձ ասում է՝ ամեն ինչ լավ կլինի
ես պարզապես պետք է փոխեմ ապրելակարգն իմ,
և նա կրկնում է
որ իմ զուգընկերն է ու
այդպիսին էլ կմնա ընդմիշտ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Մի իսկական բացահայտում էր
երբ տեսա նրան
ծնկաչոք նստած
ոլորում էր հատակի քուրջը
այդ ձեռքերը կարող էին նաեւ
անկասկած քամել
արյունը սրտից
նա ճարպիկ մարմնով իր
հետո կարող էր հասակով մեկ կանգնել
զոհասեղանի առջև:

ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ես մտադիր եմ նրա
հետ ամուսնանալ
անկախ ամեն ինչից
ինչ էլ պատահի
ինչ էլ որ լինի
բայց երբ գիշերը երազ եմ տեսնում
իմ երազները չեն կիսում
մտադրությունս:

ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Ես իմ իմաստությամբ միշտ հայհոյում ու
պարսավում եմ նրան
ես միշտ հանդիմանում ու
ուղղում եմ նրան
ուսուցչուհու պես
հյուծելով նրան, ոչ ոք ոչինչ չի խնդրել
ընդհանրապես ոչինչ այս թեման փակ է
անհեթեթության տեղ չկա այլևս
ես ուզում եմ դուրս գալ արեւերես:

ԿՈՂՈՍԿՐԵ ՎԱՆԴԱԿ

Երբեմն նրան խնդրում եմ
պառկել ինձ վրա
գտնել կողոսկրե վանդակն իմ
որի մասին ոչինչ չգիտեմ
իսկ կյանքի ալեկոծ ծովը հիշեցնում է ինձ
ցավի ու հերոսության մասին
զանգվածային ու հոծ
գուցե տրալերի[1]
պողպատե պատ է
ներսից մոմլաթով պատած
որ լողում է դեպի Հորնբյարգ[2]
անեծքի շարա՞ն է
թե՞ աղոթք առ Աստված
կամ կյանքի կոչ.
սրանցից ոչ մեկը
բայց ինչ-որ անսասան բան՝
հանց ապագա:

1. տրալեր - ուռկանապարկակիր նավ

2.Հորնբյարգ - լայնակի ֆգվող ծովային ժայռ, որը գտնվում է Վեստֆիրդիրի[3] հյուսիս-արևմտյան մասում:

3.Վեստֆիրդիր - թերակղզի Իսլանդիայի հյուսիսում, որը նաև ութ տարածաշրջաններից մեկն է:

ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Ինձ ասում են
նա չարագործ է
բայց իրականում նա ընդամենը
մարդկանց լրտեսում է
ինչպես օրինակ
ես եմ ուզում լրտեսել նրան.
մինչ տուն հասնելը
կարդալ նրա փոստը
ստուգել հեռախոսը
նրա պահարանը
խոհանոցի դարակները
նրա բարձի տակը
սինթետիկ վերմակը
նրա համակարգիչը
նրա կեղտոտ շորերը
նրա սառնարանը
իսկ ի՞նչ էր անում Մերիլին Մոնրոն
նրա պատի
թիթեռներն ու ծաղիկները, նրա երեխաները –
ճնշող աշխարհ:

ԱՄՐՈՑԸ

Ես ամեն ինչ գիտեմ չարագործների մասին
նրանք ներթափանցում են քո հոգու խորքը
տարածվում այնտեղ ու առևանգում այն
դնում մի տոպրակի մեջ
և զբոսնելով բարձրանում լեռները
լեռներում նրանք մի ամրոց ունեն
որտեղ ճչոցները դառնում են հրեշտակների երգ
(իսկական հեքիաթ):

ԳԻՇԵՐՆ ԱՐԹՆԱՆԱԼՈՎ

Մի գիշեր ես նրա հետ քնեցի
քաղաքի մյուս ծայրում
վախից արթնացա
կարծես նա հարձակվել է վրաս
ես հագնվեցի և մեկնեցի տուն
հետո տեղեկացա
որ ժամանակ է պետք
սովորաբար մեկ կամ կես տարի:
Կարող էի ժամացույցը գործի դնել:

ՍԵՆՅԱԿ, ՀԱՐԿ, ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Եթե նա նույն սենյակում լիներ, ես կճմլեի նրան
եթե նա ներքևի հարկում լիներ, ես կխենթանայի
նրա համար
եթե նա հարևանությամբ լիներ, ես կմեռնեի սիրուց

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Նա վստահեցնում է որ
երախտապարտ է
սիրո համար
ես հաշվում եմ
նրա զանցանքները
ճիշտ է, երախտագիտությունը
ցուցակի առաջին տեղում է:

ՄԻ ՓՇՐԱՆՔ ՍԵՐ

Ես երկու բաի բան նետեցի նրա վրա երբ նա ինձ թողեց
հանգստյան օրերից հետո, ձմեռն անսովոր
ձյունառատ էր
ուստի նետված բաներն աստիճաններին էին դեռ,
ինքս ինձ հարցրի՝
ո՞րն էր սխալս, ուժեղ կա՞մքը թե՞ ագրեսիվ պահվածքը
բայց հետո
լուծեցի հանելուկը.

ես ուզում եմ մեղավոր լինել և մտնել իմ բանտը:
Իսկ նա
այցելի ինձ և կերակրի ինձ իր ափի
փշրանքներով

ՑՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ամեն անգամ երբ նա հրաժեշտ է տալիս
լցվում եմ այնպիսի զգացումով որ այլևս
չեմ տեսնի նրան
և համակվում եմ դատարկ երբեմն նաև
մահացու մտքերով:

Դա իմ ներսում գտնվող երեխան է որ ղեկավարում է
իսկ կինը կանգնած է գազօջախի մոտ
աչքերը սևեռած կաթսային:

ՀԵՌԱԽՈՍԱԶԱՆԳ

Ես չէի էլ պատրաստվում պատասխանել
երբ նա զանգում էր
իսկ երբ չէր զանգում
խենթանում էի:

ՁԱՅՆԸ

Եվ երբ անսպասելիորեն զանգում եմ
ինչ խմբի հետ էլ որ նա լինի
ես լսում եմ այդ կոպիտ ձայնը
այդ խռպոտ ու ջղային
բիրտ ու
ուժամոլ
ձայնը
որից ես հաճախ եմ վախենում
լացում
լացը ճեղքում է հեռախոսը և
դուրս նետվում լսափողից:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ II

Երբ ինչ-որ բան եմ բացահայտում՝
իմ խոցելիությունը, բռնությունը
օրգազմի վախը
գլխիս միջի ընտանեկան կռիվները,
նա իր մեծ աչքերն ինձ է հառում եւ
բարձրաձայնում. «Օ, կարծում էի այսքան
ժամանակ սթափ ես եղել»:

ԻՆՉ-ՈՐ ՓԼՎԱԾ ԲԱՆ

Ամեն ինչ կատարելագործվում է
նույնիսկ գլուխս
այժմ միշտ չէ որ մտածում եմ
թե ինչ պիտի ասեմ
ասես ապրում եմ դաժան պայմաններում
փոխարենը պատնեշը փլվել է հիմա
և բառերը դուրս են հորդում ինձնից:

FRÍÐA OG DÝRIÐ*

Ես կսիրեմ նրան
ինչպես հրեշը
ով վերածվեց իշխանի
բայց կարծիքը փոխվեց
և ես դարձա երկմիտ.
ով է հրեշը
ով կարիք ունի սիրո
և ով պետք է փոխվի:

**Fríða og dýrið /իսլ./ - Գեղեցկուհին և հրեշը*

Մաս II

...համակեցություն

ԿՈՂՊՎԱԾ ՄԱՐԴԸ

Իր տեղափոխվելու նախորդ գիշերը
նա վստահեցնում էր ինձ
որ կանայք հաճախ փոխում էին կողպեքները
արգելելու նրա մուտքը ներս
և նրա աչքերը լցվում էին արցունքներով
ես չգիտեի՝ ծիծաղել թե լալ
նա ասաց՝ երբ հարբած էր լինում կանայք կարծում էին
որ նա կծեծի իրենց
և գիտակցաբար փոխում էին կողպեքները
ու նա տուն էր մտնում կողպված դռներով
նա ստիպեց ինձ խոստանալ
երբեք չփոխել կողպեքները երբեք
երբ ամեն ինչ բարեհաջող լինի
ես կշտապեմ տուն փոխելու կողպեքները
բայց շարունակում էի կենակցությունս
անկախ ամեն մի դժվարությունից
կողպված կլինեի դրսից թե ներսից
բայց դեռ կլինեի ինչ-որ տեղ:

ՄԵԿ ԱՅԼ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ ԿՈՂՊԵՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ես չեմ նշել որ
հաճախ եմ եղել կողպեքները փոխելու
ցանկության շեմին
քանի որ անուժ էի նրան խնդրել
վերադարձնել իմ բանալին
քանզի ես չէի պատրաստվում լինել
այդ վատ կանանցից մեկը:

ԱՆՊԻՏԱՆԸ

Նա ձեռքը սահեցնելով մտցնում է
իմ ձեռքի մեջ երբ կեսգիշերին ներս է մտնում
ես ձևացնում եմ որ չեմ նկատում
նա կախում է իր նկարը
դասավորում արձանիկները դաշնամուրի վրա
և ասում որ իմ իրերն
անպիտան են իսկ դա այնքան լավ է
վեպ գրելու համար
նույնիսկ կարիք չկա որ նա
ներողություն հայցի:

ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ

Մինչ նա մեխում է
և պտուտակում, գայլիկոնում է և սոսնձում,
չափում է և նկարում և փոխում է
լամպերը, մութը պատում է տունը
և հաղորդագրություն է ուղարկում
ինձ գրելով՝ որքան հիանալի է
ինձ հետ ապրելը, մատներս հարվածում են
ստեղներին առանց տառերը տեսնելու
և մեքենայաբար
անպիտան բաներով լցնում
համակարգիչը՝ նկարագրելով
«անպիտան» բաներից կազմված իմ կյանքը
որն ապագայում գուցե դառնա բեսթսելեր:

ԵՐԲ ՆԱ ՆԵՐՍ ՄՏԱՎ

Կարծում եմ՝ նա ցնորված է
իսկ ես ստանձնել եմ
հոգեբուժարանի բուժքրոջ դերը.
մեջքը թեթև շոյել ձեռքով
ջուր բերել նրա համար
միացնել հեռուստացույցը
ասել որ ամեն ինչ լավ կլինի
սակայն հետո ինչ-որ կերպ
բոլոր ուղիները փակվում են:

ՄԱՐՄՆԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ I

Արժանի եղա
աղոթքով միանալ
Աստծուն և հարցնել՝
ի՞նչը այնպես չէ
ինչու՞ մենք անընդհատ վիճում ենք։
«Նա ուզում է, որ դու քեզ այլ կերպ պահես»,-
ասում է Աստված
և անհետանում:
Ես կախված եմ բռնարարից
անվերջ վեճեր
դժգոհություն անհանգստություն
զգում եմ՝ գլուխս
լցվում է սև թանաքով
և ես աղաչում եմ Աստծուն որ ինձ օգնի
հաջորդ օրը մի մարդ հայտնվում է շեմին
առաջարկելով աշխատել մարմնի հիշողության հետ.
ես զգում եմ որ կրում եմ վիշտը
որ ոսկրածուծ ինչպես լցված է մարմինս
վիշտ հանց տզրուկ
բայց չեմ ուզում կորցնել
երբ կորցրի հորս
վիշտը դարձավ նրա փոխանորդը
իսկ մարմնի հիշողության հետ աշխատող մարդը
առաջարկում է խզել կապվածությունը
և դրանից հետո ես զգում եմ՝
կյանքը կարող է նաև շարունակվել:

ՄԱՐՄՆԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ II

Ես հալեցնում էի սառնարանի սառույցը
երբ տղամարդը տեղից վեր թռչեց կրկին
և ինչպես միշտ ես կորցրի մարմնի հիշողությունը
և հրեցի նրան աստիճաններից
և ասացի նրան՝ այլևս հետ չգաս
հայրիկիս մահվան օրն էր
նույն օրը նրանք բոլորը գնացին
հայրիկն ու Էյնար Բենը՝ բազմոցը[1],
և հոր հետ ապաստան փնտրող նավաստին
մի քանի օր անց գնացի հոգեբուժարան
նա եկավ և վերցրեց բանալին:
(Այնտեղ ես անծանոթ մեկն ունեի իմ գրկում
ում փոխ էր տվել իմ փոքրիկ զարմուհին
քիչ-քիչ ես սկսեցի պարել
և արձակել լայն բաճկոնը
որն իմ հագին էր
և պատանին, ով չէր ժպտացել
նույնիսկ մի շաբաթ առաջ
ժպտում էր նրա աչքերով
իսկ հետո նա եկավ ու վիճեց
այն սենյակում որտեղ դաշնամուրն էր:
Ես պարզապես ծիծաղեցի:
Ինչու՞ ես երբևէ չեմ լացել)

1. Էյնար Բենը իսլանդացի բանաստեղծ Էյնար Բենեդիկտոն է (1864-1940), ում կահույքը 1935 թ. նվիրաբերվել էր Իսլանդիայի համալսարանին, այնտեղից էլ տարվել էր տարբեր տներ և վայրեր Ռեյկյավիկում (Landsbókasafn 2019): Հնարավոր է, որ մեկի բազմոցը կոչվի Էյնար Բեն՝ վկայակոչելով նրան:

ՍԵՐ

Սերը սև հերմետիկ
ծխախոտի տուփ է
շաքարաման սուրճի բաժակ
պտտում է
հյուսնի գծաքանոնը
սեղանի վրա
արևի ներքո
երկու սիրտ է
եւ ես չգիտեմ
որն է
իմը:

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Նա իմ թիթեռները կպցնում է
Լիբանանից բերված կապույտ պայուսակին
մուտքի դռանը
հեռուստացույցի լարին
տեղավորում է ջահը
ներկում պատուհանագոգերը
ասես կյանքն իմ բացվում է
չնայած կարծում եմ
դա իմ պատկերացումն է;
չի կարող ուղեղս արձանագրել դա
քանզի իմ սիրտը մի անգամ
արդեն կոտրվել է:

ՄԱՅՐԱՄՈՒՏ

Մենք իրար հետ լավ ենք
միասին հեռուստացույց ենք նայում
ես նրան սուրճ եմ բերում
և հարցնում՝ արդյո՞ք ուզում է բարձրանալ
ժայռն ու տեսնել մայրամուտը
բայց դա նրան չի հետաքրքրում:

Նա նույնիսկ չի ուզում տեսնել լուսինը
և անգամ զբոսնել
բայց մի անգամ ինձ հաջողվեց
նրան հետս քարշ տալ լեռներ
և նա ասաց որ երջանիկ է ու

երբեք ավելի երջանիկ չի եղել

գուցե երջանկությունն
այն լեռան մեջ էր:

ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐԵԼՈՎ

Մենք գնում ենք կինո
և համերգներ
և նույնիսկ թատրոն
բայց նա երբեք չի
բռնում
իմ ձեռքը
սկսում եմ մտածել
ինչ-որ բան այն չէ
իմ ձեռքի հետ:
Չեմ հասկանում
ինչու չեմ ելնում
տեղից ու դուրս գալիս

Գուցե կինոթատրոնը
դռներ չունի:

ԳՐԿԱԽԱՌՆՈՒԹՅՈՒՆ

Ընդամենը մեկ գրկախառնություն ու, վերջ,
փոխարենն ամեն ինչ արվեց
ամեն ինչ ասվեց քննարկվեց մինչեւ մահ
քնեցի սև զուգագուլպայով
սեղմած կորսետով
վերանորոգվեց ամբողջ տունը
ընդամենն ուզում էի մեկ գրկախառնություն
մեկ գրկախառնություն ու բնակվել այնտեղ
ուժեղանալ այնտեղ
զգալ քեզ
որ կարող ես գեթ մի բան անել:

ԼՈՒՄՆԻՆ ԱՍԱ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Նա նվաստացրեց իմ ընկերներին
այն ընկերներին ովքեր կարծում են
թե կնոջը պետք է ընդունել որպես կին
նա չի սիրում նաև լուսինը
որը նույնպես իմ ընկերն է
կարծում եմ ահավոր վատ է
ես միշտ պայքարում եմ
և պահանջում ներողություն խնդրել
ասես առնետ լինեի ով
կոյուղու խողովակը տուն է համարում
և փնթփնթում առհոսման ժամանակ.
Ասա լուսնին՝ ներողություն:

ՍՈՒԶՄԱՆ ԾԱՄՓԻՆ

Երբ անսպասելի ինչ-որ բան եմ անում՝
փորձում խաղալ խնդրում պարել
կատակով տապալում նրան գետնին
էրոտիկ հանդերձանքով
քայլում նրա մահճի առջև,
ասես հոգեւարք է բռնկվում նրա մեջ.
սկսում է հռհռալ
փոթորկվում վերածվում հանկարծ վայրենու
կարծես նավ է սուզվում,
խորտակվում:

ԱՆՀԵՏԱՑԱԾ ԾՈՎՈՒՄ

Ես հոտոտում եմ նրա շապիկը.
այդ քաղցր բույրը
այդ օծանելիքը
ճաշի թույլ հոտը
ուզում եմ տանել շապիկն անկողին
բայց, չէ, ծալում եմ
և մի կողմ դնում:

ՇԱՊԻԿԸ

Աթոռին ընկած է նրա վանդակավոր
շապիկը, ես հեղեղվում եմ կրքով
կարող եմ նույնիսկ այն հագնել
ու ողբալ:

ԱՆԱՆՈՒՆ

Նա գնում է ծով
և մենությունն ինձ բզկտում է
ես դժգոհ չեմ
բայց կարծես դեռ փախչում եմ
ծովի վտանգից
երբ միայնությունը
թուլացնում է սահմանը
ես գիտեմ որ նա նույնն է զգում
մենք մենության նվիրյալներ ենք
և երբ նա թափանցում է իմ ներսը
դառնում է մենություն
ես՝ նույնպես
ես պարզապես մենակ եմ սենյակում
պատերին ընդհանրապես ոչինչ չկա
հետո հիշում եմ, որ սա այն սենյակն է
երբ 1979 թ.սեպտեմբերի 17-ին
այցելել ենք հոգեբուժարան:

Ես ինձ կողպել եմ նրա ներսում
ինչպես ցանկացած այլ սենյակում:

Ես կողպված էի շատ մարդկանց ներսում
նույնիսկ չեմ հիշում՝ որքան ժամանակ:

ՀՐԵՇՏԱԿ

Ես փորձում էի լուծել
իմ ընկերոջ հանելուկը
և ես ուզում եմ որ
նա կրկին ուղարկվի ինձ.
կարծում եմ՝ ես իմ նկատմամբ
բռնություն գործադրած չեմ լինի
իմ ձեռքով:

ԳԱԳԱԹՆԱԿԵՏԸ

Ես հարաբերությունների գագաթնակետ չէի կոչի
յոթանասուն նեյլոնե գուլպաները
կամ այն զույգը որում խցկեցի նրան
ոչ նրա ծրագրած նախագծերը
«*Iða*» գրախանութի նախասրահում
ոչ բոլոր հացի կոտլետները
ոչ սուրճ խմելը
կամ կյանքը Սիրո ձեղնահարկում
ոչ թատրոն գնալը
որտեղ ներկայացման թեման պտտվում էր մեր շուրջ
ոչ նրա ծննդյան օրը երբ նա
խոստացել էր աղով եփած գառ և լոբի
բայց գնել է միայն մի քանի թխվածք
ոչ երբ նավ եմ նստել
ոչ բոլոր արդիականացումները
ոչ նույնիսկ այն երբ հանել է սիրտս խրված նիզակը
որ նա խոցել էր, երբ հայրս մահացել էր
ոչ այն երբ գնացել ենք ատամնաբույժի
ոչ, գագաթնակետ կկոչեի այն
սպասքը
որը միասին լվացել ենք
մի անգամ.

այդ ժամ տիրում էր երջանկություն:

ՆՅԱՐԴԱՅԻՆ ԽԱՆԳԱՐՈՒՄ ԴԱՐՁԱԾ ՍԵՐԸ

Չնայած կային տան հետ առնչվող բազում ծրագրեր
ես երբեք չեմ զգացել նրա ներկայությունն այնտեղ
նա ապրում էր Հուսահատության անկյունում
հանց ձկնորսական տարածք:
Նա պնդում է որ ես նրան սպանում եմ
թունավորում եմ, պատմում է զույգերի
խորհրդատուին որ ես էի պատճառը նրա սայթաքման
երբ իմացա որ նա չարաշահող է
սկսեց բարձր ու շփոթահար լացել.
ես անկարող եմ անել ինչ-որ բան բացի
ցնցվելուց նրա արցունքներից
(ես նույնիսկ լացել չեմ կարողանում),
և երբ սեռական օգնություն խնդրեցի
նրա նյարդերը վերջնականորեն տեղի տվեցին.
կարծես ձկնորսական մի այլ տարածք էր նա:

ՎԵՑ ԱՄՍՎԱ ՀԱՄԱՏԵՂ ԿՅԱՆՔ

Ես նրա հետևից
մաքրեցի արյունը
պատից

երբ բռունցքով
խփեց
պատին

ես ջարդում եմ
երեսուն կիլոգրամանոց սրտի քարը
Հեկլայից* ու ներս բերում պատուհանով

իսկ նա դնում է
պատի նոր տախտակաղրվագում
ինձ համար:

Հեկլա - գործող հրաբուխ Իսլանդիա կղզու հարավում

ՍՐՃԱԹԱԹԱԽ

Նա իմ դեմքին սուրճ է շպրտում
ինչ-որ պատճառով, ես կանգնում եմ
ցախավելի պահարանի մոտ և կանգնած մնում
մինչև ուշքի գալը
դա արվեց
սկսվեց կրկին
քանզի բռնությունը երբեք չպիտի ներվի
որովհետև այն նորից կկրկնվի
և ես չեմ պատրաստվում սպասել
ուստի բացում եմ պահարանը
հանում ցախավելը
և թռչում հեռու:

ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՍԵՆՅԱԿ

Ես առնչվել եմ
հոգեբուժարանի հետ ութ անգամ
ինչու՞ դրա փոխարեն չեմ գնացել
Կանարյան կղզիներ:
Այնտեղ հանդիպեցի մի բուժքրոջ
ով ասաց, որ ես ենթարկվել եմ
վնասվածքային փորձության
այժմ էլ փորձում եմ ոչնչացնել ինձ լիովին:
Ինչ-որ արու էակ արարում
ու կործանում է ամեն օր,
գուցե ես ինքս եմ ստեղծում ինձ
աղոտ ճանապարհով
որ տանում է անդունդ:
Անհեթեթություն,
անիծյալ
տխմար անհեթեթություն:

Մաս III

...բաժանում

ԱՐԻ ՄՏԱԾԵՆՔ ԱՅԼ ԲԱՆԻ ՄԱՍԻՆ

Արի մտածենք լողավազանի մոտ գտնվող եղևնիների
մասին որ ճկվում են քամու սաստկությունից
և ուզում նետվել ջրերի մեջ
գրկիր ինձ ու ասա՝
դադարիր մտածել նրա մասին
մենք սիրում ենք քեզ
հա, արի մտածենք այլ բանի մասին
արի մեր մտքին դադար շնորհենք
անվերջ ալեկոծվելով նրա հետ
կողպելով իրականությունը
բորբոքելով զայրույթը վիշտը կասկածը ատելությունը,
գուցե ես սիրել եմ նրան
իսկ նա այդ սերը չի հաղթահարել
ահա ինչպես եմ խաբում ինքս ինձ
նա չկարողացավ իբր հաղթահարել
արի մտածենք այլ բանի մասին:

ՄԵՔԵՆԱՆ

Ինչու՞ չեմ կարող դադարել
մտածել նրա մասին:
Հետո հասկացա որ
դարձել էի մեքենա
երբ վերջ դրի մեր հարաբերություններին:
Ես կրկին մարդ դարձա
և դադարեցի մեքենա լինելուց.
սեռական մեքենա
բռնության մեքենա
անցյալի մեքենա
կին մեքենա
մտամոլոր մեքենա
ճչացող մեքենա
իր նետող մեքենա
ցավի մեքենա
մնացող-գնացող մեքենա
և դարձա անհատ:

ՍԵՐԸ ԾՈՎԱԾԻՆ Է

Բոլորն ասում էին նրան
որ ծովում շատ ձուկ կա
բայց նրա տղամարդը ձուկ չէր
նա ծեր ծովածին էր:

ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Երբ նա զանգեց
սենյակից
կարծում էի
իմ խմիչքը բերողն էր:

Ես մի պահ մտածեցի
խմելու մասին
չէի ուզում բաց թողնել նրան

կուզեի անհետանալ հանց ալկոհոլի մեկ բաժին:

ՄԱՐՄՆԻ ԴԱՌՆՈՒԹՅՈՒՆ

Ծնչահեղձ եմ լինում,
արթնանում եմ՝
դեմքս կոպիտ է ռունագրերի* պես:
Ես այնքան տխուր եմ
գուցե սերն է
կորցնում մազերը:

** Ռունական այբուբենի տառեր, որոնք օգտագործվում էին գերմանական լեզուներում մինչև լատինական այբուբենի ներմուծումը:*

ՍԻՐՈ ԴԱՌՆՈՒԹՅՈՒՆ

Ուզում եմ քաղցկեղով հիվանդանալ ու մահանալ,
հաստատ
ուռուցք ունեմ, ի զորու եմ լսել միայն շշուկները, նրա
քթի տակի ծիծաղը, սուրճի կումերը,
դանակ-պատառաքաղի
չխկչխկոցը, թերթը շրջելու շրշյունը, ալիքներ փոխելը
հեռակառավարման սարքով. վերարկուն կախված էր
կախիչից, իսկ իմ
կրծքապտուկը՝ կծկված:

ՀԱՐԱՋԱՏ ԿԱՐՈՏ

Ուզում եմ որ նա
ինձ համար գնի
մի փոքրիկ շիշ կոլա
և սուրճ մատուցի
անկողնում
մաքրի ձյունը
մեքենայից
վերանայի իմ հաշիվները
հետո նստի
աթոռին և հեռուստացույց
նայի:

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԵՐԹ

Երբ ես միայնակ արթնացա ձեղնահարկում թվաց՝
ինչ-որ խորշից
մի սկյուռ սողոսկեց մարմինս՝ այնքան քնքուշ
բայց այնքան ցավոտ
քանի որ ծակոտիներն ու բջիջներն անտեսանելի են:
Բայց ես
քերթեցի սկյուռը և նա վերածվեց արցունքների
ու տեսա որ
արցունքներն այդ ադամանդներ են, ես կուտակեցի
ադամանդները մորթու վրա,
դրսում իսլանդական գորշ ձմեռ էր ու նոր սկիզբ:

Մորթին ձմեռն էր, ադամանդները՝ նոր սկիզբ:

ՀԱՐՄԱՐԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

Նա ինձ վրա սուրճ էր թափում
հրաժարում
ոտքով հարվածում էր ինձ
հրաժարում
եթե հարվածը չէր ստացվում
իմ հետևից վազում էր նկուղ
հրաժարում
նոր տարվա գիշերը հեռացավ
և ինձ թողեց տանը մենակ
հրաժարում
գրանցվեց ծանոթությունների կայքում
հրաժարում
ես ջնջեցի նրա բոլոր հաղորդագրությունները
և որոշեցի այլևս չխոսել նրա հետ
նա ինձ անիծեց
ցնորում ու մահ մաղթեց
ոչինչ չասելու փոխարեն
ես լավ պատասխանը տվեցի
նա ինձ հասավ աստիճաններին
և սպառնաց ոստիկանությամբ
ես խնդրեցի նրան հեռանալ
իսկ երկու օր անց
սերն ու ռոմանտիկան հաղթահարեցին ինձ ու ասացին՝
հետևիր քո սրտին և պայքարիր

հանուն սիրո
որը միշտ իմ սրտում էր
այդ գիշեր ես գիր էի
ուղարկել նրան
և քանի որ չէր պատասխանել
ուզում էի զանգել սակայն
իրականությունը կանխեց ինձ.
ես փափագում էի հրաժարումը:

ԱՆԱՎԱՐՏ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ ՄՈՌԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Գոնե հիմա կարո՞ղ եմ մոռանալ քեզ
ամբողջովին, հավետ,
մոռանալ քեզ
և փորձել հիշել
որ պետք է զանգեմ
կոշիկներս տանեմ վերանորոգման
հանդիպեմ ընկերոջս հետ
գառ պատրաստեմ փոքրերի համար
կերակրեմ բադերին
գնամ թատրոն
մարմինս մերսեմ լոսյոնով
մաքրեմ խոհանոցի հատակը
կամ պարզապես ոչինչ չանեմ
զգամ՝ ինչպես է կյանքը հոսում իմ միջով
իսկ երբ դու մոռացված
ու թաղված լինես
կնայես երկնքի միջով
կամ գլուխդ հազիվհազ
դուրս կհանես շիրմից՝
հոգնած ու տրտմած,
միշտ հոգեմաշ
որ ես հիշեմ դա:

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԶՎԱՐՃԱԳՆԱՑՔ

Ամերիկյան զվարճագնացքից ստացած
լավ հիշողություններից հետո
դժվար էր հավատալ
որ դու կծեծես դուռը և կներկայանաս
բարկությունից խենթացած ու քեզ կցանկանայիր
ամենավատը:
Հսկիր պատուհանից՝ կարող եմ բծոտել
մեքենադ շրջանցիկ ճանապարհին:
Վախենում էի զանգել՝
գուցե ժամադրության ես,
ուզում էի քայլել դեպի քո տունը
թակել դուռն առանց իմանալու որ
հերթական զայրույթը հիասթափություն կբերի
մի հավատա որ դու այլևս իմն ես՝
ինչպես մահացածը որ ոչ մեկինը չէ.
ուզում եմ վրեժխնդիր լինել՝ ինչ-որ վատ բան անել
և նորից տրվել լավ հիշողություններին
հետո մի առավոտ արթնանալ
ու հանգիստ ընդունել
որ մենք բաժանվել ենք
այլապես մենք միշտ վիճում ենք
և փչացնում մեր հարաբերությունները:

ՔԱՐ-ՁՈՒԿ

Եկավ նոր տարին
բայց ոչ մի պար «Քար-ձկան» վրա
լուսնալույսի ոչ մի շող
ձյան վրա ոչ մի ոտնահետք
օդի մեջ ոչ մի սեր
ոչ մի հույս
պարի մեջ
ոչ մի կին ելնող
երկնամուխ ժայռից
կորսետով պարելու
հրավառության տակ
տղամարդու հետ
ձկնորսի ձեռքերից բռնած:

ԼԵԶՈՒՆ

Այդ գիշեր հաղորդագրություն եմ ուղարկել
իսկ նա չի պատասխանում
ես զգում եմ՝ ինչպես է ատելությունը
կողպում յուրաքանչյուր նյարդ
ես նողկում եմ նրանից
կարող էի նրան խեղել
կաշին քերթել
կտրտել մարմինը
հանել աչքերը
իմ կատվին նետել
նրա դեմքին
մինչև գտնեմ լեզուն
որ մոռացել էի կտրել:

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԳԻՇԵՐ

Նա հայտնվեց մետաքսյա խալաթով
հասարակաց տնից բերած մի ծաղկամանով
այդ գիշեր ես ինքս ինձ համոզում էի
որ ինձ համար չափազանց դժվար է
ապրել վախի ու բարկության մեջ
ես պետք է առ սիրտս
հրավիրեմ սերը
քանզի այն պողպատյա նյարդեր ունի:

ՄԵՆՔ ՊԱՐԶԱՊԵՍ ՄԱՐԴԻԿ ԷԻՆՔ

Ով բերեց հին գործիքները
նոր ժամանակներ
ողբերգական է
շատ ողբերգական
ես մոմ եմ վառում
և դնում պատուհանին
վշտի համար
երբ բացահայտում եմ
որ այս ամենը պատրանք է
իսկ գուցե պատրանքն էր
լավագույն գործիքը:

ԻՍԿԱԿԱՆ ԿԻՆԸ II

Ես նրանից նամակ եմ ստանում որում գրված է որ
ես ահաբեկիչ եմ և
պետք է կալանավորվեմ: Ինչ ամոթ է, մի ժամանակ
ես իսկական կին էի
իսկ հիմա ինձ ակնհայտորեն ցած գլորեցին
պատվանդանից:
Հիշում եմ՝ իսկական կին ինձ կոչում էր
իմ վերջին ընկերը
ով գլխարկներ էր կարում իսկական կանանց համար,
նա իսկական կանանց տալիս էր նաև
կորսետներ ու շրթներկ, իսկ ինչպիսինն են իսկական
կին-քածերը,
և հանկարծ հասկացա, որ ուզում եմ ծիծաղել
այս ամբողջ իրականության վրա:
Այո, ուզում եմ լիաթոք քրքջալ, ոչ թե նյարդայնանալ:
Այսպես, հաջորդ անգամ երբ լսեմ
«իսկական կին» խոսքը ես այնքան ուժեղ
կծիծաղեմ որ
ձու կածեմ, ոսկե ձվեր:

Հի հի հի հի քայլ արա, հի-հի, արա ևս մեկ քայլ ու նաև երրորդը, հի-հի

ԵՐԵԽԱՆ ԳՐՔՈՒՄ

Հեքիաթը տարան
երեխայից
և նա ստիպված մտավ
մեծերի աշխարհ
հետո ոչ ոք չտեսավ որ նա
երեխա է:

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԳԻՇԵՐ

Նա անընդհատ
խառնում է կաթսան
և չի կարողանում դադարել
չի կարողանում ավարտել
չի կարողանում թողնել այն

իսկ երբեմն երբ
նույնիսկ թողնում է
մի վայրկյանով՝ գդալը
սկսում է ինքն իրեն խառնել

երեխան թմբկահարում է
աղմուկ բարձրացնելով կեսգիշերին,
«ձեռքին գդալ»
պատկերը պատճենվում է
օդում

մինչ բանաստեղծությունները
ճգում են նրան
բոցերից

իսկ երեխան պահանջում ու
պահանջում է

հետո լռում
մի պահ:

Վերջապես, երբ կինը հասնում է
պուն և ավարտում ստեղծագործելը
հանգստությունը վրա է հասնում հետո գտնում է
դուռը, նա այնքան է զարմանում բայց
գտնում է նաև բանալին. հոգոց է հանում
թեթև հառաչում, ... և դուռը բացվում է:

ՎԱՐԱԳՈՒՅՐԸ

Եթե նա թակեր դուռը
իսկ ես վարագույրի պես սահուն
մոտենայի դռանը
կարող էի վառվել ու դառնալ մոխիր
որ լեցուն կլիներ
վեճ ու կռվով
պաշտպանվելու համար:

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Էլիզաբեթ Քրիստին Յոկուլսդոտիրը (ծն. 1958) իր ստեղծագործություններով մեծ ճանաչում է գտել ոչ միայն Իսլանդիայի գրական ասպարեզում եւ ստացել տարբեր մրցանակներ: Նրա առաջին բանաստեղծական ժողովածուն՝ «Պարը փակ սենյակում» (Dans í lokuðu herbergi), լույս է տեսել 1989թ., այնուհետև հրատարակել է բանաստեղծությունների այլ հավաքածուներ, ինչպես նաև վեպեր երեխաների ու չափահասաների համար, պատմվածքներ ու պիեսներ, պատրաստել պարային գործեր ու ներկայացումներ: Էլիզաբեթը երկու անգամ ստացել է իսլանդական Կանանց գրական մրցանակը՝ «Փականագործի լավ խորհուրդը» (վեպ) և «Սեր, Նյարդերի քայքայում» (պոեզիա) ստեղծագործությունների համար: «Ոչ մի պար Ձուկ-Քարի» վրա գիրքը (Ástin ein taugahrúga. Enginn dans við Ufsaklett) 2016թ. Հյուսիսային Խորհրդի գրական մրցանակի հավակնորդների շարքում էր, իսկ 2015թ. առաջադրվել էր DV Մշակութային մրցանակի: 2016թ. Իսլանդիայի նախագահական ընտրություններում Յոկուլսդոտիրը թեկնածու էր: Իր՝ «Արևոտ ապրիլյան ցուրտ» (Aprílsólarkuldi) ինքնակենսագրական վեպի համար նա 2020թ. «Գեղարվեստական գրականություն» անվանակարգում ստացել է Իսլանդական գրական մրցանակ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մաս I

...սիրալիրություն

Մոռացված դուռ 6
Սերն ինձ նախկինում խենթության էր հասցնում 7
Իսկական կինը 8
Բանաստեղծություն սիրո
կամ մոռացության մասին 9
Առաջին օրը 10
Երկրորդ օրը 11
Երրորդ օրը 12
Չորրորդ օրը 13
Ցմեռային սիրավեպ 14
Պարը 15
Պլաստիկ պայուսակ կրողը 16
Ախտանիշ 17
Իմ ընկերը 18
Ապրելակարգ 19
Բացահայտում 20
Մտաղրություն 21
Իմաստությունը 22
Կողոսկրե վանդակ 23
Բռնություն 24
Ամրոցը 25
Գիշերն արթնանալով 26
Սենյակ, հարկ, հարևանություն 27
Երախտագիտություն 28
Մի փշրանք սեր 29
Ցտեսություն 30

Հեռախոսազանգ 31
Ձայնը 32
Բացահայտում II 33
Ինչ-որ փլված բան 34
FRÍÐA OG DÝRIÐ 35

Մաս II

...համակեցություն

Կողպված մարդը 38
Մեկ այլ բանաստեղծություն
կողպեքների մասին 39
Անպիտանը 40
Համակեցություն 41
Երբ նա ներս մտավ 42
Մարմնի հիշողություն I 43
Մարմնի հիշողություն II 44
Սեր 45
Վերանորոգում 46
Մայրամուտ 47
Համատեղ ապրելով 48
Գրկախառնություն 49
Լուսնին ասա ներողություն 50
Սուզման ճամփին 51
Անհետացած ծովում 52
Շապիկը 53
Անանուն 54
Հրեշտակ 55
Գագաթնակետը 56
Նյարդային խանգարում դարձած սերը 57
Վեց ամսվա համատեղ կյանք 58

Սրճաթաթախ 59
Առաջին բուժօգնության սենյակ 60

Մաս III
...բաժանում

Արի մտածենք այլ բանի մասին 62
Մեքենան 63
Սերը ծովածին է 64
Ողբերգություն 65
Մարմնի դառնություն 66
Սիրո դառնություն 67
Հարազատ կարոտ 68
Փետրվարյան երթ 69
Հարմարավետության գոտի 70
Անավարտ բանաստեղծություն
մոռանալու մասին 72
Ամերիկյան զվարճագնացք 73
Քար - ձուկ 74
Լեզուն 75
Հոկտեմբերյան գիշեր 76
Մենք պարզապես մարդիկ էինք 77
Իսկական կինը II 78
Երեխան գրքում 79
Կախարդական գիշեր 80
Վերջապես, երբ կինը հասնում է տուն... 81
Վարագույրը 82

Հեղինակի մասին 83

Էլիզաբեթ Քրիստին ՅՈԿՈՒԼՍԴՈՏԻՐ

ՍԵՐ, ՆՅԱՐԴԵՐԻ ՔԱՅՔԱՅՈՒՄ. ՈՉ ՄԻ ՊԱՐ ՉՈՒԿ-ՔԱՐԻ ՎՐԱ

Թարգմանություններն անգլերեն տարբերակից՝
Քրիստինա ՔՈՉԱՐՅԱՆԻ

Խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Թ. Մաթեւոսյան
Էջադրումը՝ Թ. Հարությունյանի
Կազմի ձեւավորումը՝ Ա. Խաչատրյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափը՝ 60x84 1/16:
Ծավալը՝ 5.75 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության
տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան 25

«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

«Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով,
Վ.Խոդասեւիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,
Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Հենրիխ Սապգիր. «Զուգահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խռովությունը.
մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուբը.
Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբռ (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոդոլազկին. «Լավր» - 2015
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 1) - 2016

Յու Ջիան. «Անձրեւից պատսպարվող թռչունը» - 2016
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.
Փախուստ դրախտից» - 2016
Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016
Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո
պատմությունը» - 2016
Լյուդմիլա Պետրուշեւսկայա. «Սեր. երջանկություն.
ռեքվիեմ» - 2016
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»
(անթոլոգիա) - 2016
Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016
Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, ուդդայականությունը,
դաոսիզմը, քրիստոնեությունը եւ չինական
մշակույթը» - 2016
Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016
Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017
Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017
Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» - 2017
Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 4) - 2017
Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուդ» - 2017
Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017
Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017
Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017
Սյաո Ցյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ
նախագծերի» - 2017
Ուան Ցուոլիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017

Ֆյոդոր Սոլոգուբ. «Ձնչաղեւը» - 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 5) - 2018
Ու Չուն. «Չինական մշակույթ. փիլիսոփայություն» -2018
Մարտիրոս Ոբն. «Մոմերն իզուր են այրվել
մեղքերիս համար» - 2018
Ուեյսին Սյուրն, Սյուն Ճու. «Չինաստանի յուրահատկու-
թյունները: Չինաստանի համաշխարհային
ժառանգությունը»- 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 6) - 2018
Աղի ձայնը (20-րդ դարի հետուբսունական թվականների
սերնդի չին գրողների պատմվածքներ) -2019
20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) - 2019
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 7) - 2019
Գվինեթ Լյուիս. «Քառսի հրեշտակները» - 2020
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Ազատ մարդը» - 2020
Ցերինգ Նորբու. «Փրկված գառը» - 2020
Չժան Յավեն. «Դարերի կանչը» (Մտորումներ Հոնկոնգի
մասին. իրական պատմություն) - 2020
Կոնֆուցիոս. «Զրույցներ» - 2020
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 8) - 2021
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 9) - 2021
Մարիա Գրեչ Գանադո. «Երիզվածք» - 2021

www.vogi-nairi.am
Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
հեռ.: +374 97252323